

ՍՏ. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՆՏՐԱԿՏԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՅՐՈՒՂԻՆ ՍՍՌ-ՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը մեր երկրի ժողովուրդներին ազատագրեց սոցիալական և ազգային դարավոր ճնշումից, ներանց տվեց ազատություն և իրավահավասարություն հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում: Դժայց հեղափոխության հաղթանակից հետո անմիջապես չէր կարող վերացվել ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական փաստական անհավասարությունը: Այդ խնդիրը լուծվեց սովետական իշխանության գոյության մի ամբողջ ժամանակաշրջանում: Սոցիալիստական ազգերի կուլտուրական փաստական անհավասարության վերացման նպատակով, ՍՄԿՊ-ն կազմակերպեց և իրականացրեց կուլտուրական հեղափոխություն:

Վերացնելով սովետական ժողովուրդների կուլտուրական մակարդակների միջև գոյություն ունեցած անհավասարությունը, կուլտուրական հեղափոխությունը հանգեցրեց բնակչության համընդհանուր գրագիտությանը, գիտությանը, գրականության ու արվեստի աննախընթաց վերելքին, աշխատավորների կենցաղի արմատական վերակառուցմանը: Հետևողականորեն կենսագործելով լենինյան ազգային քաղաքականությունը, Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն իր գործունեության մեջ միշտ էլ ելել է այն բանից, որ անհրաժեշտ է օգնել, նպաստել սովետական յուրաքանչյուր ժողովրդի «զարգացնելու իրենց մոտ մամուլը, դպրոցը, թատրոնը, ակումբային գործը և առհասարակ կուլտուր-լուսավորական հիմնարկները մայրենի լեզվով»¹:

Հայտնի է, որ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում ապրող 50 ժողովուրդներ չունեին իրենց գիրը: Իրոհնք առաջին անգամ այն ձևով բերեցին սովետական իշխանության պայմաններում:

Սովետական պետությունը միշտ էլ խաշոր միջոցներ է տրամադրել սոցիալիստական ազգերի կուլտուրաների զարգացման համար: Բնորոշ է, որ ցարական կառավարությունն իր գոյության 150 տարվա ընթացքում Ղազախստանի լուսավորության կարիքների նպատակին, բնակչության յուրաքանչյուր շնչի հաշվով ծախսել է 6 ու 60 կ. կամ տարեկան 4 կ²: Սովետական իշխանությունը միայն մեկ տարվա՝ 1960 թ. ընթացքում Ղազախստանի դպրոցների շինարարության համար ծախսել է 28 միլիոն ռուբլի², 1959 թ. Սովետական Ուզբեկստանում լուսավորության նպատակների համար ծախսվել է 1,6 մի-

1 ՍՄԿՊ-ն համադրմանների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, 1-ին մաս, Երևան, 1954, էջ 713:

2 «Развитие социалистической культуры в союзных республиках», М., 1962, стр. 158:

3 Նույն տեղում:

լիարդ ռուբլի կամ յուրաքանչյուր շնչին՝ 205 ռուբլի Դա նշանակում է, որ 1959 թ. 1915 թ. համեմատությամբ լուսավորության համար կատարված ծախսերը ավելացել են 1000 անգամ⁴։ Միութենական հանրապետությունների կուլտուրաների ծաղկման մասին են վկայում նաև հետևյալ տվյալները. եթե նախասովետական Միջին Ասիայում գոյություն ունեւր ընդամենը 3 թատրոն, ապա 1956 թ. Ուզբեկստանում գործում էր 26 թատրոն (ղրանից 22-ը մայրենի լեզվով), Ղազախստանում՝ 20 (17-ը մայրենի լեզվով), Կիրգիզիայում՝ 7 (5-ը մայրենի լեզվով), Տաջիկստանում՝ 8 (7-ը մայրենի լեզվով), Թուրքմենիայում՝ 5 (4-ը մայրենի լեզվով)⁵։

Ազգային կուլտուրաների ծաղկման լավ օրինակ է ծառայում Սովետական Հայաստանը։ Նախասովետական Հայաստանի բնակչությունը հիմնականում անգրագետ էր։ Չկային անհրաժեշտ թվով դպրոցներ և ուսուցիչներ, որի հետևանքով էլ դպրոցական տարիքի երեխաների 15-ը սովորելու հնարավորություն չունեւր։ Սովետական իշխանության տարիներին Հայաստանում բուռն վերելք ապրեց դպրոցական գործը։ 1961—1962 ուսումնական տարում Հայկական ՍՍՌ-ում ուսուցման բոլոր ձևերում ընդգրկված մարդկանց թիվը կազմեց 408,8 հազար, որը ավելի քան 10 անգամ գերազանցեց 1914—1915 ուսումնական տարում սովորողների թիվը⁶։

Ներկայումս հանրապետությունում ուսման տարբեր ձևերում ընդգրկված է կես միլիոնից ավելի մարդ։ Ինչ վերաբերում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների թվին, ապա պետք է ասել, որ միայն անցած տարի հանրապետության բուհերը երկրին տվեցին ավելի քան 2900 մասնագետ։ Նախասովետական Հայաստանում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն։ Ներկայումս տասնյակից ավելի գործող բուհերում սովորում է ավելի քան 22 հազար ուսանող։ Հայկական ՍՍՌ-ում յուրաքանչյուր 10 հազար բնակչին ընկնում է բուհերի 123 ուսանող⁷։ Դրանով Սովետական Հայաստանը զգալիորեն գերազանցում է Ֆրանսիային, Իտալիային, Ճապոնիային, իսկ Իրանին՝ ավելի քան 15 անգամ⁸։

Սովետական Հայաստանը ծածկված է կուլտուր-լուսավորական հիմնարկների խիտ ցանցով։ Այժմ հանրապետության քաղաքներում ու գյուղերում գործում են՝ 853 ակումբ, 778 գրադարան, 19 թանգարան և այլն։

Բուռն թափով զարգանում է սովետական ավտոնոմ ռեսպուբլիկաների և մարզերի կուլտուրան։ Բերենք մի քանի փաստեր. եթե նախասովետական Դաղստանում հաշվվում էր բարձրագույն կրթություն ունեցող 17 մարդ, ապա 1959 թվականին՝ բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցողների թիվը հասավ 30 հազարի⁹։ 1959 թ. տվյալներով, Դաղստանի Լակի շրջանի Չումիկյան առում կար բարձրագույն կրթություն ունեցող 400 մարդ։ Այդ առում տվել է գիտությունների 40 թեկնածուներ և 3 դոկտորներ¹⁰։ Բնորոշ է, որ

⁴ «Правда Востока», II февраля 1960.

⁵ «Культурное строительство СССР», Сборник, М., 1956, стр. 54—70.

⁶ «Культурное строительство Армянской ССР» (статистический сборник), Ереван, 1962, стр. 5.

⁷ Там же, стр. 6.

⁸ XXII съезд КПСС. Стенографический отчет, М., 1961, т. I, стр. 601.

⁹ «Дагестанская правда», 28 апреля 1959.

¹⁰ Там же.

Չուվաշական ԱՍՍՌ-ի յուրաքանչյուր երրորդ քաղաքացին սովորում է կամ յուրաքանչյուր 10 հազար բնակչին ընկնում է 168 սովորող: Դրանով սովետական Չուվաշիան առաջ է անցել Անգլիայից, Ֆրանսիայից և Իտալիայից¹¹:

Սովետական բոլոր ժողովուրդների կուլտուրաների զարգացման նկատմամբ մշտական հոգատարությունը կարմիր թելի նման անցնում է ՍՄԿՊ և սովետական կառավարության ամբողջ գործունեության միջով: Հայտնի է, որ մեր երկրի, հատկապես հյուսիսի ժողովուրդները մինչև սովետական կարգերի հաստատվելը ծայրահեղ հետամնաց վիճակում էին: Օրինակ, մինչև 1917 թ. Յակուտիայի յուրաքանչյուր 1000 մարդուց միայն 7-ը կարող էին գրել ու կարդալ: Բավական էին սովետական իշխանության մի քանի տասնյակ տարիներ, որպեսզի Յակուտիան վերածվեր համատարած գրագիտության և ծաղկուն կուլտուրայի երկրի: Արդեն 1957 թ. Յակուտիայի ավտոնոմ հանրապետության դպրոցներում սովորում էր 70 հազար աշակերտ, տեխնիկումներում՝ 4500 ուսանող: Միայն Յակուտական պետական համալսարանում ուսանողների թիվը հասավ 2200-ի¹²:

Սովետական Միությունում ասորող սակավաթիվ ժողովուրդների կուլտուրական հզոր վերելքի համար լավ օրինակ կարող է ծառայել քուրդ ժողովուրդը: Աշխարհում քուրդ ժողովուրդը բազմամիլիոն է և ցրված տարբեր երկրներում: Սովետական Միությունում քրդերի թիվը 100 հազարից չի անցնում: Միայն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի շնորհիվ քրդերն ունեցան իրենց գիրը: Սովետական Հայաստանում ստեղծվեց քրդական «Ռիաթազա» («Նոր ուղի») թերթը, քրդերեն հրատարակվում են դասագրքեր և զանազան բնագավառների վերաբերյալ գրականություն: Խոսելով Սովետական Հայաստանում ապրող քրդերի կուլտուրայի ու կենցաղի վերափոխման մասին, այդ ժողովրդի ներկայացուցիչ, հին բուլղարիկ Ա. Շամիլովը նշել է. «Հայաստանի քրդերն այսօր, այլևս նախկին քրդերը չեն, նրանց գյուղերն այլևս նախկին գյուղերը չեն: Տուֆաշեն նրանց տներում վառվում է Իլյիչի էլեկտրական լույսը: Քրդական գյուղերը ծածկված են դպրոցներով, ակումբներով ու գրադարաններով»¹³:

Ազգային կուլտուրաների ծաղկման մասին է վկայում նաև սովետական հանրապետությունների հրատարակչական գործի բուռն զարգացումը: Միայն 1962 թ. ՍՍՌՄ-ում գրքեր՝ հրատարակվել են սովետական ժողովուրդների 61 լեզուներով¹⁴: Հետաքրքրական է, որ եթե 300 տարվա ընթացքում (մինչև սովետական իշխանության հաստատվելը) Վրաստանում հրատարակվել է 6 հազար անուն գիրք՝ 1 միլիոն օրինակ ընդհանուր տպաքանակով, ապա սովետական ժամանակաշրջանի երկու տարվա՝ 1959—1960 թթ. ընթացքում հրատարակվել է 4700 անուն գիրք՝ ավելի քան 24 միլիոն օրինակ ընդհանուր տպաքանակով¹⁵: 1960 թ. 1955 թ. համեմատությամբ հրատարակված գրքերի քա-

¹¹ Юбилейная сессия Верховного Совета Чувашской АССР, посвященная 40-летию образования Чувашской АССР. Стенографический отчет. Чебоксары, 1960, стр. 23.

¹² «По ленинскому пути» (Журнал Якутского обкома КПСС), № 6, 1958, стр. 21.

¹³ Материалы межреспубликанского семинара-совещания на тему: «Советское Закавказье в братской семье народов СССР» в Баку, апрель, 1961 г. Стенограмма материалов, стр. 538.

¹⁴ «Печать СССР в 1962 г.», Статистические материалы. М., 1963, стр. 5.

¹⁵ «Вопросы истории КПСС», 1961, № 2, стр. 36.

նակը ավելացել է՝ ուկրաիններեն լեզվով՝ 61,6 տոկոսով, կիրգիզերեն՝ 44, տաշիկերեն՝ 41,9, ադրբեջաներեն՝ 37,8, լուվաշերեն՝ 27,4, վրացերեն՝ 23,3 տոկոսով¹⁶։ Եթե 1940 թ. խավայում հրատարակվել է 3,7 միլիոն օրինակ գիրք, ապա 1959 թվականին՝ 12.8 միլիոն օրինակ¹⁷։

Ամեն տարի յուրաքանչյուր բնակչին մեր երկրում բաց է թողնվում 9 անգամ ավելի շատ գիրք, քան մինչհեղափոխական Ռուսաստանում։ Ամբողջ աշխարհում հրատարակվող գրքերի քառորդ մասը բաժին է ընկնում ՍՍՌՄ-ին։

Բազմաթիվ փաստեր կարելի է բերել կուլտուրական շինարարության բնագավառում սոցիալիստական ազգերի և ազգությունների ձեռք բերած հաջողությունների մասին։ Իրագործելով լենինյան ազգային քաղաքականությունը, կոմունիստական կուսակցությունը խնդիր է դրել շարունակել սովետական բոլոր ժողովուրդների կուլտուրայի համակողմանի զարգացումը, «հասնել ՍՍՌՄ ժողովուրդների սոցիալիստական կուլտուրայի հետագա բազմակողմանի ծաղկման»¹⁸։ Կուսակցությունը ելնում է այն ճշմարտությունից, որ «կոմունիստական շինարարության լայն թափը և կոմունիզմի գաղափարախոսության նոր հաղթանակները հարստացնում են ՍՍՌՄ ժողովուրդների՝ բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրան»¹⁹։

Հանրահայտ է, որ ազգային կուլտուրայի հիմնական ձևը լեզուն է, որի զարգացումն անխզելիորեն կապված է ազգային կուլտուրայի վերելքի հետ։ ՍՍՌՄ-ում ազգային լեզուների թիվը հասնում է ավելի քան 120-ի։ Կոմունիզմի կառուցման պայմաններում այդ լեզուները ոչ միայն զարգանում են, այլև փոխադարձաբար հարստացնում են միմյանց։ Սովետական Միության համար չկա պարտադիր պետական լեզու։ Յուրաքանչյուր ազգային հանրապետություն և մարզ լիակատար իրավունքով օգտվում են իրենց մայրենի լեզվից՝ բոլոր հիմնարկներում։ Օրենքները ՍՍՌՄ-ում հրապարակվում են բոլոր միութենական հանրապետությունների լեզուներով²⁰։

Ինչպես հայտնի է, Վ. Ի. Լենինը իր «Հարկավոր է արդյոք պարտադիր պետական լեզու» հոդվածում ընդգծում է, որ «անհրաժեշտ է պարտադիր պետական լեզվի րացակայությունը, ապահովելով բնակչությանը դպրոցներով, որտեղ դասավանդումը բոլոր տեղական լեզուներով է...»²¹։ Լենինյան այս ցուցումը հետևողականորեն իրականացնելու համար ՍՍՌՄ կոնստիտուցիայի 121-րդ հոդվածում նշված է, որ սովետական քաղաքացիներին հնարավորություն է տրվում սովորելու դպրոցներում մայրենի լեզվով²²։

Կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականությունը միշտ էլ ելել է այն բանից, որ ՍՍՌՄ յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովվի «լիակատար ազատություն՝ խոսելու, իր երեխաներին դաստիարակելու և

16 «Русский язык в национальной школе», № 3, 1963, стр. 15.

17 «20 лет Советской Литвы». Вильнюс, 1960, стр. 298—324.

18 «ՍՍՌՄ ծրագիրը», Երևան, 1961, էջ 137.

19 Նույն տեղում, էջ 137—138.

20 Սխալվում են այն հեղինակներն, որոնք գտնում են, որ Սովետական Միությունում ուսուցանելը հանդիսանում է պետական լեզու։ Բոլոր հանրապետությունների համար Այդպես է պնդում, օրինակ Մ. Ի. Ֆետիսովը։ (См. «Взаимосвязи и взаимодействия национальных литератур». Материалы дискуссии 11—15 января 1960 г., М., 1961, стр. 138).

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 29, էջ 74.

22 «ՍՍՌՄ Կոնստիտուցիա (Հիմնական օրենք)», Երևան, 1962, էջ 29.

ուսման տալու ցանկացած լեզվով, թույլ չտալով ոչ մի արտոնություն, սահմանափակում կամ հարկադրանք այս կամ այն լեզվի գործածության հարցում»²³։

Հետաքրքրական է Վ. Հրերերին գրած նամակում ազգային լեզուների հարցում էնգելսի տված բնութագիրը։ Էնգելսը գտնում էր, որ յուրաքանչյուր լեզու ունի իր գեղեցկությունը, յուրահատկությունը և որ չպետք է դնել որևէ լեզվի արտոնության կամ առավելության հարցը։

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում ՍՍՌՄ ժողովուրդների ազգային լեզուների բնավաճառում տեղի է ունենում երկու պրոցես։ Մի կողմից ազատորեն զարգանում են ազգային լեզուները, իսկ մյուս կողմից իրականացվում է ազգամիջյան՝ ռուսաց լեզվի լայն տարածումը։ Ընդհանուր օրինաչափություն է դարձել, երբ ՍՍՌՄ-ում մարդիկ օգտվում են երկու լեզուններից։ Առաջին լեզուն, դա ազգային, մայրենի լեզուն է, երկրորդ լեզուն՝ ազգամիջյան՝ ռուսաց լեզուն է։ Երկլեզվությունը ՍՍՌՄ-ում հիմնավորված երևույթ է։ Դրա միջոցով իրականացվում է սովետական ժողովուրդների կուլտուրաների զարգացումը։ Երկլեզվյան սիստեմը չի հանգեցնում մեկ լեզվի կողմից մյուս լեզուն դուրս մղելուն, այլ նպաստում է բոլոր ազգային լեզուների փոխհարստացմանն ու զարգացմանը։

Սովետական ժողովուրդների կուլտուրան իր բնույթով ինտերնացիոնալ է։ Այն բովանդակությամբ սոցիալիստական է, ձևով ազգային։ Ազգային կուլտուրաները Սովետական Միությունում զարգանում են միմյանց մերձեցման, փոխհարստացման ու փոխադարձ ազդեցության հիման վրա։ Սոցիալիստական ազգերի կուլտուրաներին խորթ է բուրժուական նացիոնալիզմը։ Նրանց անխախտելի հիմքը սոցիալիստական ինտերնացիոնալիզմն է։ Յուրաքանչյուր սոցիալիստական ազգի կուլտուրան հանդիսանում է ազգային և ինտերնացիոնալի դիալեկտիկական միասնության արտահայտությունը։ Շատ տեղին է մատնանշում Ա. Ա. Ժգանովը, որ «ինտերնացիոնալիզմը ծնվում է այնտեղ, որտեղ ծաղկում է ազգային արվեստը»²⁴։ Ինտերնացիոնալ հիմքը հանդիսանում է այն բազան, որի հիման վրա տեղի է ունենում սովետական ժողովուրդների կուլտուրաների համակողմանի մերձեցում։

Կոմունիստական շինարարության պայմաններում ազգային կուլտուրաների մերձեցումը օբյեկտիվ պրոցես է։ Այն տեղի է ունենում կամավորության և սովետական դեմոկրատիայի հիմունքներով։ Սովետական ժողովուրդների կուլտուրաների մերձեցումը չի նշանակում ազգային յուրահատկությունների վերացում։ Միութենական 15, ավտոնոմ 19 հանրապետությունների, 9 ավտոնոմ մարզերի և 10 ազգային օկրուգների գոյությունը ինքնին նշանակում է, որ պահպանվում են ազգային յուրահատկությունները։ Ժամանակակից պայմաններում ազգային կուլտուրաների զարգացման գործում մեծ դեր է խաղում թե՛ ազգային ձևը, և թե՛ սոցիալիստական բովանդակությունը։ Յուրաքանչյուր ազգային կուլտուրայի սոցիալիստական բովանդակությունը հանդիսանում է գլխավորը և այն ներգործում է ազգային ձևի վրա։

Սովետական բազմազգ կուլտուրայի զարգացումը հաստատում է Կ. Մարքսի հայտնի միտքն այն մասին, որ յուրաքանչյուր ազգի կուլտուրա չի կարող

²³ «ՄՄԿՊ ծրագիրը», Երևան, 1961, էջ 138։

²⁴ «Совещание деятелей музыки в ЦК ВКП(б)», М., 1948, стр. 139 (перевод сделан мной — С. С.)

ազգային շինել, բայց միաժամանակ սոցիալիզմի պայմաններում նրան հատուկ չի լինի ազգային սահմանափակվածությունը: Մարքսը նշել է, որ կոմունիստական շինարարության պայմաններում գեղարվեստագետի ենթարկվելը տեղական և ազգային սահմանափակվածությանը բացառվում է²⁶:

Ներկա պայմաններում, Սովետական Միությունում մշտապես տեղի է ունենում սոցիալիստական ազգերի հոգևոր կուլտուրաների փոխազդեցություն և փոխհարստացում: Մեկ ազգի կուլտուրայի հաջողությունը դառնում է մյուսների սեփականությունը: Դա հանգեցնում է ազգային կուլտուրաների ինտերնացիոնալ հիմքի սամրապնդմանը, կոմունիստական հասարակարգի համամարդկային կուլտուրայի ձևավորմանը:

Սոցիալիստական ազգերի կուլտուրաների մերձեցումը տեղի է ունենում կուլտուրական շինարարության բազմազան բնագավառներում: Մերձեցման լավ օրինակ կարող է ծառայել սովետական բազմազգ գրականությունը: Ինչպես սոցիալիստական ազգերի կուլտուրաների մյուս բնագավառները, այնպես էլ գրականությունը հագեցված են պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով: ՍՍՄԽ ժողովուրդների գրականությունները ունեն ընդհանուր, նման և հարազատ գծեր: Պարտիականությունը, հեղափոխական կրթությունը, սոցիալիստական ռեալիզմը բնորոշ է յուրաքանչյուր ազգային գրականության համար:

Սովետական ժողովուրդների գրականությունների մեջ ազգային և ինտերնացիոնալ շին հակասում իրար: Նրանք գտնվում են օրգանական միասնության մեջ: Սոցիալիստական բոլոր ազգերի գրականություններին էլ հատուկ են սոցիալիստական հայրենասիրության, ժողովուրդների բարեկամության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի բուրժուականների: Այսպես, բելոռուսական գրող Պետրուս Բրովկան իր «Երբ միանում են գետերը» վեպում պատկերում է Բելոռուսիայի, Լիտվայի և Լատվիայի աշխատավորների համատեղ աշխատանքը, որի շնորհիվ կառուցվեց «ժողովուրդների բարեկամություն» էլեկտրակայանը:

Սովետական տարբեր ազգերի շատ գրողներ իրենց երկերում պատկերում են ոչ միայն տվյալ ազգերի, այլև մյուս եղբայրական ժողովուրդների կյանքն ու կենցաղը: Վրացական գրողներ Կ. Լորդկիպանիձեն, Ա. Կուտոտելին և Բ. Մոսաշվիլին իրենց մի շարք գործեր նվիրել են Բելոռուսիայի աշխատավորների կյանքին: Ուկրաինական գրող Ա. Լեադայի «Կամո» պոեմը պատկերում է հայ ժողովրդի զավակ, խիզախ հեղափոխական Ս. Ա. Տեր-Պետրոսյանի սրխադործությունները: Ուկրաինական մեկ ուրիշ գրող Իվան Լին իր վեպերից մեկը նվիրել է ուզբեկ ժողովրդի հաջողություններին. իսկ Բուս բանաստեղծ Ն. Տիխոնովը շատ բանաստեղծություններ է նվիրել Անդրկովկասի ժողովուրդների հեղափոխական պայքարին ու սոցիալիստական առօրյային: Այդ բանական գրողներ Սարիտ Ռախմանր «Նինա» վեպում նկարագրում է Ռուսաստանի ժողովուրդների համատեղ հեղափոխական պայքարը, իսկ Ա. Արուլ-Հասանը «Բարեկամության ամրոցները» վեպը նվիրել է սովետական ժողովուրդների հերոսական պայքարին: Հայրենական մեծ պատերազմում: Լեզենդար հերոս Զոյա Կոսմոգեմյանսկայային է նվիրված Զեյնալ Խալիլի «Զոյա» պոեմը: Ադրբեջանական հայտնի բանաստեղծ Մամեդ Ռահիմը գրել է պոեմ՝ նվիրված

²⁶ См. К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, изд. второе, т. 3, М., 1955, стр. 393.

հայ աշխարհահռչակ երգիչ Սայաթ-Նովային: Ուշադրության արժանի է հայ գրողների ու գրականագետների աշխատանքը սովետական ժողովուրդներին գրականությունների մերձեցման գործում: Հայերեն լույս են ընծայվել «Ռուսական սովետական պոեզիայի անթոլոգիան», «Վրացական գրականության անթոլոգիան», ինչպես նաև սովետական մյուս ժողովուրդների գրողների բազմաթիվ երկեր:

Ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով են տոգորված Հրաչյա Քոչարի, էստոնական գրող Պ. Կուուսերգի, ղազախ Մ. Աուեզովի, վրացի Գ. Լեոնիձեի և մյուս ժողովուրդների գրողների բազմաթիվ երկերը:

Ազգային կուլտուրաների մերձեցման գործում խոշոր դեր է կատարում սովետական ազգային երաժշտությունը: ՍՍՌՄ ժողովուրդների երաժշտական կուլտուրաները հարազատ են միմյանց, կապված են իրար հետ ժողովրդական երաժշտական աղբյուրներով: Սովետական հանրապետությունների այնպիսի կոմպոզիտորներ, ինչպիսիք են Դ. Օվեկովը, Ա. Բաբաջանյանը, Ա. Մաչավադիանին, Կարա Կարաևը, է. Հովհաննիսյանը, Մ. Բուրգանովը, Սոլովյով-Սեդոյը, Ն. Ցիգանովը և ուրիշները ստեղծել են երաժշտական գործեր, որոնք էսթետիկական մեծ բավականություն են պատճառում սովետական բազմազգ մարդկանց:

Սովետական ժողովուրդների երաժշտական կուլտուրաների փոխհարստացման ու փոխազդեցության լավ օրինակ են ծառայում հայ ականավոր կոմպոզիտոր Ա. Խաչատրյանի ստեղծագործությունները: Նրանք արտահայտում են հայ ազգային «Գայանե», բալետը, «Պեպոյի երգը», «Երգ Երևանի մասին» և այլն և միաժամանակ Սովետական Միության մյուս ժողովուրդների երաժշտական ոգին: Արամ Խաչատրյանի «Ռուսական ֆանտազիան» արտահայտում է ռուս ժողովրդի ազգային երաժշտության առանձին կողմերը: Կոմպոզիտորը մշակել է նաև տաջիկական և սովետական մյուս ժողովուրդների շատ ստեղծագործություններ: Ադրբեջանական կոմպոզիտոր Ս. Հաջիբեկովի «Տոնական սյուիտան» ստեղծվել է ՍՍՌՄ ժողովուրդների երաժշտական ֆոլկլորի հիման վրա, իսկ Կարա-Կարաևի «Յոթ գեղեցկուհիներ», «Ամպրոպի արահետներով» բալետները հանդիսանում են ոչ միայն ադրբեջանական, այլև սովետական մյուս ժողովուրդների երաժշտական կուլտուրաների արտահայտություններ:

Ազգային կուլտուրաների մերձեցման գործում կարևոր դեր է կատարում սովետական տարբեր ազգերի ներկայացուցիչների երկերի թարգմանությունը առանձին ազգային լեզուներով: «Իդեալական» կիներ, — գրել է Մ. Գորկին, — եթե Միության մեջ մտնող յուրաքանչյուր ժողովրդի յուրաքանչյուր գործ թարգմանվեր Միության մյուս բոլոր ժողովուրդների լեզուներով: Այդ դեպքում մենք բոլորս ավելի արագ կսովորեինք հասկանալ միմյանց ազգային կուլտուրական հատկություններն ու առանձնահատկությունները, իսկ այդ հասկացողությունը բնականորեն շատ կարագացներ այն միասնական սոցիալիստական կուլտուրայի ստեղծման պրոցեսը, որը շանտեսելով բոլոր ազգերի առանձնահատուկ գծերը, կստեղծեր միասնական, հսկայական, հզոր և ամբողջ աշխարհը վերափոխող սոցիալիստական կուլտուրա²⁶:

Սովետական Միությունում արդեն տրադիցիա է դարձել ազգային գրողների երկերը տարբեր լեզուներով թարգմանելը: Միայն 1960 թ. սովետական

26 «Правда» 17 февраля 1934 года.

գրողների երկերը թարգմանվել են մեր երկրի ժողովուրդների 58 լեզուներով: Օրինակ՝ Վ. Մայակովսկու գործերը թարգմանվել են 59, Ա. Տոլստոյինը՝ 55, Ա. Սերաֆիմովիչինը՝ 43, Ջամբուլինը՝ 24, Գ. Գուլիայինը 22 լեզուներով և այլն: Այդ նույն թվականին «Советский писатель» հրատարակչությունը Սովետական Միության ազգային լեզուներից ռուսերեն է թարգմանել 140 անուն գիրք: 1954—1955 թթ. Մոսկվայի և Լենինգրադի ռուսական հրատարակչություններում լույս են տեսել բելոռուսական գրողների մոտ 100 անուն գրքեր²⁷:

Սովետական երկրում զարգացող ազգային կուլտուրաների մերձեցմանը մեծ չափով նպաստում են ՍՍՄԽ ժողովուրդների արվեստի ու գրականության տասնօրյակներն ու շաբաթները, որոնք փոխադարձաբար կազմակերպվում են միութենական և ավտոնոմ հանրապետություններում: 1964 թ. հունիսին էստոնիայում՝ հայկական արվեստի շաբաթի և սեպտեմբերին Հայաստանում՝ էստոնական արվեստի շաբաթի անցկացումը, հայ և ադրբեջանական թատրոնների փոխադարձ ներկայացումների միամսյակը հանդիսացան ազգային կուլտուրաների մերձեցման լավ օրինակներ: Ուկրաինական ստեղծագործական կոլեկտիվների հյուրախաղերը Հայաստանում և հայկական արվեստի ներկայացուցիչների ելույթները Ուկրաինայում դարձել են տրադիցիոն: Սովետական Ուկրաինայում լայն ժողովրդականություն են վայելում Գոհար Գասպարյանն ու Ջարա Դոլուխանովան, Արամ Խաչատրյանն ու Արնո Բաբաջանյանը և ուրիշներ:

Ազգային կուլտուրաների առանձին ճյուղերի մերձեցման օրինակ է ծառայում նաև այն, որ սովետական հանրապետությունների ստեղծագործական կոլեկտիվներում աշխատում են տարբեր ազգերի ներկայացուցիչներ, իսկ Ելույթների ծրագրերն արտահայտում են սովետական արվեստի բազմազգությունը: Ուզբեկական ՍՍԽ պետական ֆիլհարմոնիայի կոլեկտիվը բաղկացած է 600 մարդուց, որից 200-ը ուզբեկներ են, 200-ը՝ ռուսներ, 100-ը՝ ուկրաինացիներ և բելոռուսներ: Կոլեկտիվի մեջ կան նաև ուլգուրներ, լատիշներ, ղազախներ, հրեաներ, թաթարներ և այլ ազգերի ներկայացուցիչներ: Ելույթների ծրագրում մշտապես հնչում են սովետական շատ ժողովուրդների երգեր²⁸:

ՍՍՄԽ-ում սոցիալիստական ազգերի մերձեցումը իր արտահայտությունն է գտնում նաև գիտության բնագավառում: Սովետական Միության գիտությունների ակադեմիան ոչ միայն կոորդինացնում, այլ մեծ չափով նպաստում է հանրապետությունների գիտական հիմնարկների համագործակցությանը: Սերտ բարեկամության պայմաններում են աշխատում Հայկական ՍՍԽ գիտությունների ակադեմիայի բոլոր ինստիտուտներն ու կազմակերպությունները: Սովետական Միության հանրապետությունների գիտական հիմնարկների հետ: Մեր հանրապետության գիտությունների ակադեմիայի բոթիմիայի ինստիտուտը համագործակցում է Ուկրաինական ՍՍԽ գիտությունների ակադեմիայի բոթիմիայի ինստիտուտի հետ: Սերտորեն համագործակցված են աշխատում

27 М. В. Чекалин, Коммунизм и нация. Ленинград, 1962, стр. 17.

28 Նույն տեղում, էջ 18.

29 Текущий архив ЦК ЛКСМ Узбекистана. «Справка о работе Узбекской республиканской комсомольской организации по интернациональному воспитанию молодежи». ноябрь—декабрь 1962 г., л. 23.

Անդրկովկասյան հանրապետությունների գիտությունների ակադեմիաները, նրանց պրեզիդենտներ Վ. Հ. Համբարձումյանը, Ե. Ի. Մուսխելիշվիլին և Զ. Ի. Խալիլովը գրում են. «Մենք ոչ միայն բարի դրացիներ ենք, այլև մեծ բարեկամներ: Վրաստանի յուրաքանչյուր գիտնականի սրտանց ուրախացում է Ադրբեջանի և Հայաստանի գիտնականների հաջողությունները: Հայաստանի և Ադրբեջանի յուրաքանչյուր գիտնական սրտանց ուրախանում է վրաց ընկերների հաջողություններով»³⁰:

Ազգային կուլտուրաների զարգացման ու մերձեցման միասնական պրոցեսը չի նշանակում, որ կուլտուրայի ազգային բոլոր ձևերը կմնան: Սովետական ժողովուրդների կուլտուրաների զարգացման պրոցեսում վերանում են հնացած, կոմունիստական շինարարության խնդիրներին անհամապատասխան ձևերը: Ստեղծվում են բոլոր ազգային կուլտուրաների համար նոր, ընդհանուր, կոմունիստական շինարարության շահերն արտահայտող ձևեր: Սովետական ժողովուրդների ազգային կուլտուրաների զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր ազգ իր արժանավոր ավանդն է մուծում ինտերնացիոնալ կուլտուրայի ընդհանուր զանաւարան: Մ. Գորկին նշել է. «Աշխարհում առաջին պրոլետարական պետությունը հանդիսանում է բարոյ, որտեղ բազմաթիվ ժողովուրդների երիտասարդությունը ինտերնացիոնալ դաստիարակություն է ստանում. որտեղ հայ, վրացի, բաշկիր, թուրքմեն և բոլոր ժողովուրդների պատանիները չկորցնելով իրենց կուլտուրաների ազգային առանձնահատկությունը, հասնում են աշխատավոր մարդկության կուլտուրայի բարձր ձևին՝ ինտերնացիոնալ կուլտուրային»³¹:

Սովետական ժողովուրդների նպատակների ընդհանրությունը, միասնական ընտանիքի զգացումը նպաստում են ազգային կուլտուրաների զարգացմանը, նրանց անընդհատ մերձեցմանը:

ՍՍՌՄ-ում կոմունիստական շինարարության պայմաններում իրագործվում է ազգային կուլտուրաների անընդհատ ծաղկումն ու մերձեցումը, որոնք կազմում են այն միասնական հիմքը, որի վրա էլ պետք է ձևավորվի ինտերնացիոնալ, համամարդկային կուլտուրան:

Այսպիսով, ՍՍՌՄ-ում ազգային կուլտուրաների զարգացման մայրուղին, նրանց ծաղկումն ու զարգացումն է:

С. С. СТЕПАНЯН

СТОЛБОВАЯ ДОРОГА РАЗВИТИЯ НАЦИОНАЛЬНЫХ КУЛЬТУР В СССР

Р е з ю м е

Культурная революция в СССР в основном привела к ликвидации неравенства культурного уровня советских народов. Культурная революция означает подъем культуры, всеобщую грамотность населения, создание культурно-технических кадров из среды трудящихся, развитие науки.

³⁰ «Заря Востока», 6 апреля 1963 г.

³¹ М. Горький, Собрание сочинений, т. 27, стр. 529—530

литературы и искусства, социалистическое перевоспитание людей и коренную перестройку их быта.

Бурно развивается и культура как союзных, так и автономных республик и областей Советского Союза. На примерах союзных, автономных республик и областей ярче виден расцвет культур различных социалистических наций и народностей.

Культура советских народов носит интернациональный характер. Она сложилась и развивается на основе братского содружества социалистических наций, национальных групп и народностей Советского Союза. Советской культуре чужд буржуазный национализм. Ее незыблемым фундаментом является пролетарский интернационализм. Культура каждой социалистической нации является выражением диалектического единства национального и интернационального. Интернациональная основа является той базой, на которой происходит всемерное сближение культур советских народов. В коммунистическом строительстве сближение национальных культур является объективным процессом. Оно происходит на началах добровольности и советской демократии. Но сближение культур советских народов не означает ликвидации национальных особенностей и самобытности социалистических наций.

Развитие многонациональной советской культуры блестяще подтверждает мысль К. Маркса о том, что культура каждой социалистической нации не безнациональна, но она лишена национальной ограниченности.

В период развернутого строительства коммунизма происходит два процесса в языковой жизни народов СССР. С одной стороны, свободно развиваются национальные языки на основе их равноправия и взаимобогащения. С другой стороны, осуществляется все более широкое распространение межнационального, русского языка. Общей закономерностью стало развитие пользования двумя языками в СССР. Двухязычие в СССР — объективно обусловленное явление. Система двухязычия в СССР способствует не вытеснению одного языка другим, а развитию всех национальных языков.

В СССР, в период развернутого строительства коммунизма развитие национальных культур осуществляется на основе двух взаимосвязанных тенденций: 1) лучшие черты национальных культур становятся достоянием других народов; 2) национальная культура каждого народа обогащается достижениями культуры других народов. Это означает, что происходит объективный процесс тесного сближения и взаимного обогащения национальных культур.

В условиях коммунистического строительства расцвет национальных культур содействует их дальнейшему сближению, а их сближение и все стороннее сотрудничество является основой и главным условием их развития и расцвета.

Таким образом, расцвет и сближение — столбовая дорога развития национальных культур в СССР.